«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ»

Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների մոտ հայրեանաճանաչողության կարևորությանը

Դաստիարակ՝ Անուշիկ Մաթևոսյան

Մանկապարտեզ՝ «ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄՍՈՒՐՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

2023

Բովանդակություն

Ներածություն----------3-4 էջ

Գլուխ 1. Նախադպրոցական տարիք երեխանեի հոգեբանական առանձնահատկությունները.

1.1 Նախադպրոցական տարիքի երեխաների հգեկան ֆունկցիաների զարգացումը--4-7 էջ

1.2 Խաղը որպես երեխայի մեջ հայրենաճանաչողություն սերմանելու միջոց---8-11-էջ

Գլուխ 2. Հայրենաճանաչողության և հայրենասիրության ձևավորման գործընթացը նախադպրոցական տարիքի երեխաների մոտ----------12-18 էջ

Եզրակացություն----------19-20 էջ

Օգտագործված գրականության ցանկ----------21 էջ

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Աշխարհաքաղաքական ժամանակակից զարգացումների ֆոնին, էթնիկական ու կրոնական, միջազգային ահաբեկչության սպառնալիքների պայմաններում, սեփական ազգի գոյատևման հարատև պայքարում առաջնային դերակատարում է ստանձնում հայրենասիրությունը:

Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակությունը և հայրենաճանաչողության գործընթացը հայ ժողովրդի պատմության կերտման բոլոր փուլերում արդիական է եղել: Դա պայմանավորված է մեր հասարակության մեջ նյութական արժեքների գերակայությունը հոգևոր արժեքներից: Այնուամենայնիվ, մատաղ սերնդի դաստիարակությունը Հայրենիքի հանդեպ հարգանքի և սիրո շրջանակներում կազմում է բարոյապես առողջ, կենսունակ բնակչություն: Նախադպրոցական տարիքի երեխաները հատկապես հուզական, հետաքրքրասեր են, պատրաստ են կարեկցանքի, նրանք գտնվում են անձնական կողմնորոշման ձևավորման գործընթացում, ինչպես նաև զարգացման համար համարվում է սենզիտիվ շրջան, ուստի հնարավոր է առավել արդյունավետ իրականացնել կրթական աշխատանքը: Դրան նպաստում է նաև նախադպրոցական տարիքի երեխաների հատուկ զգայունությունը մեծահասակների ազդեցության նկատմամբ:

Կարևորորելով թեմայի արդիականությունը պետական քաղաքականության մշակման շրջանակներում ՀՀ կրություն, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման չափորոշիչը և օրինակեի ծրագիրը սահմանելու ծրագիրը սահմանելու մասին» 22.09.2022թ. թիվ 1704-Ա2 հրամանի՝ հետազոտական աշխատանքների առաջարկվող թեմաներում, ի թիվս այլ կարևոր թեմաների, ընդգրկված է «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը» թեման:

Թեմայի նպատակը: Թեմայի նպատակն է հոգեբանամանկավարժական մեթոդների միջոցով նպատսել նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողության ձևավորմանը և հետևաբար հայրենասիրության զարգացմանը:

Աշխատանքի կազմակերպման ձևերն ու մեթոդները.

Հայրենաճանաչողությանը և հայրենասիրական դաստիարակությանը նպաստելու համար նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելու մեթոդներն են.

- Նախադպրոցական ուսումնական հաստատություններում հայրենասիրական անկյունների կազմակերպում.
- էքսկուրսիաների կազմակերպում հայրենի երկրի տեսարժան վայրեր, այցելություն թանգարաններ, ցուցահանդեսներ, պատկերասրահներ.

թեմատիկ միջոցառումների կազմակերպում (անկանխության օրվան նվիրված, հաղթական տոներին նվիրված, ազգային տոներին և ավանդույթներին նվիրված, պետական խորհրդանիշերին նվիրված, ազգային հերոսյաներին նվիրված)

- անցկացնել թեմատիկ քննարկումներ հայրենիքի հանդեպ սիրո թեմայով, կարդալ համապատասխան գործեր, բանաստեղծություններ, ֆիլմեր և հաղորդումներ դիտել, ազգային հերոսների դիմանկարների և նրանց ծավալած գործունեության վերաբերյալ դրվագների ներկայացում:

Թեմայի օգտակարությունը.

Հետազոտական աշխատանքի արդյունքում արված եզրահանգումները կարող են օգտակա լինել նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության գործընթացի բարելավմանն ու արդյունավետության բարձրացմանը, որն էլ իր հերթին կնպաստի հայրենասեր քաղաքացիների ձևավորմանը:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը.

Աշխատամքը բաղկացած է՝ ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործվող գրականության ցանկից:

Ընդհանուր ծավալը 20 համակարգչային էջ:

Գլուխ 1.

Նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական զարգացման առանձնահատկությունները

1.1 Նախադպրոցական տարիքի երեխաների հոգեկան ֆունկցիաների զարգացումը

Նախադպրոցական հոգեբանությունը հոգեբանության ճյուղերից է:

Նախադպրոցական տարիքն ընդգրկում է 3-7 տարեկան հասակը: Այն բաժանվում է 3 փուլի՝

- վաղ
- միջին
- ավագ նախադպրոցական տարիք:

Յուրաքանչյուր փուլ կարևորվում է իր զարգացման առաձնահատկություններով: Վաղ նախադպրոցական տարիքից մինչև ավագ նախադպրոցական տարիք էական զարգացում է ապրում **իմացականի ոլորտը՝** մտածողությունը: Խոսքի զարգացմանը զուգընթաց այլ մարդկանց հետ երկխոսության զարգացման արդյունքում մտածողությունը անցնում է դեպի կոնկրետ գործառնությունների մակարդակ: Մեծերի շփման պրոցեսում աստիճանաբար զարգանում է երեխայի խոսքը: Նա սկսում է տիրապետել ծավալուն խոսքին կարողանում է արտահայտել իր զգացմունքներն ու պահանջները: 4-6 տարեկան երեխաները, գործելով առարկաների հետ ցանկանում են իմանալ նրա կառուցվածքը, նշանակությունը, օգտագործման ձևը և այլն: 5-6 տարեկանում շատանում են հարցերը երեխաների մոտ, որը մեծահասակների հետ շփման ձև է: Եթե դաստիարակը աջակցում է երեխայի հարցերին, ապա ձևավորվում են անձի արժեքավոր գծերը՝ հետաքրքրասիրություն, հարցասիրություն, դիտողականություն: Եթե դաստիարակը ոչ մի նոր բան չի տալիս նրան, ապա երեխայի մոտ կորում է հետաքրքրությունը տվյալ պատմության նկատմամբ: Այս տարիքում երեխայի մոտ զարգանում է

նկարչական, երաժշտական հնարավորությունները և ընդհանրապես ստեղծագործական միտքը: Զարգանում է կամային գործունեությունը, այսինքն երեխան սկսում է ղեկավարել իրեն և իր գործունեությունը:

Նախադպրոցական տարիքին զուգընթաց տեղի է ունենում նկատելի փոփոխություններ նաև երեխայի հուզա-զգայական ոլորտում: Ավելի է ամրանում համակրանքի զգացումը, կարեկցումը և նրբությունը շրջապատող անձանց նկատմամբ: Լավ կազմակերպված կոլեկտիվում առաջանում է ընկերասիրության, բարեկամության զգացում: Նախադպրոցականը ձեռք է բերում պարտքի և պատասխանատվության զգացում: Նախադպրոցական տարիքում հաճախ են վախ և տագնապ զգում ֆիզիկական պատժից կամ, երբ ծնողները պատժելու համար ասում են, որ էլ չեն սիրում երեխային: Վախն ու տագնապը կանխելու համար պետք է երեխային սեփական օրինակով ցույց տալ, որ վախենալու ոչինչ չկա: Պետք է զերծ պահել երեխային ընտանեկան վեճերից և արգելել հեռուստացույցով դիտել ագրեսիվ տեսարաններ:

Նախադպրոցական տարիքը մի շրջան է, երբ երեխան կազմավորվում է որպես տղա կամ աղջիկ: Երեխան սեփական «Ես»-ն առաջին անգամ իմաստավորում է սեռի տեսանկյունից: Ձևավորվում է երեխայի սեռային նույնականությունը և սեռային ինքնագիտակցությունը: Սեռային նույնականության և ինքնագիտակցության զարգացման զուգահեռ տեղի է ունենում սեռային դերերի և սեռադերային վարքի յուրացմանը: Սեռային դերը հոգեբանորեն մեկնաբանվում է, որպես միջավայրի կարծրատիպերի վերագրումների չափորոշիչների սպասումների մի համակարգ, որին մարդը պերք է համապատասխանի, որպեսզի նրան ընդունեն որպես տղա կամ աղջիկ: Նախադպրոցական տարիքում երեխայի կողմից իր սեռի ճանաչման գործում մեծ դեր ունի մեծահասակը, հատկապես ծնողները:

Նախապատրաստում ուսուցման

Նախադպրոցական տարիքի վերջում՝ երեխային անհրաժեշտ է նախապատրաստել ուսուցմանը՝ դպրոցում: Դպրոցում սովորելու համար երեխայից պահանջվում է մտավոր, հուզական և սոցիալական զարգացվածության որոշակի մակարդակ: Երեխան պետք է կարողանա խոսել, մտածել արտահայտել իր մտքերն ու

զգացմունքներն, ունենա որոշակի բառապաշար, կարողանա կատարել տարրական տրամաբանական մտահանգումներ:

Շատ կարևոր է երեխայի մոտ նախապես ձևավորել որոշակի դիրքորոշում դպրոցական դառնալու, դպրոցում սովորելու նկատմամբ: 6-7 տարեկան երեխաների մեծ մասը ձգտում է աշակերտ դառնալ, բայց ոչ բոլոր դեպքերում են նրանք բավականչափ հստակորեն պատկերացնում, թե ինչ է իրենից ներկայացնում սոցյալական այդ դերը: Երբեմն նրանց գրավում է գործի միայն արտաքին կողմը, նրանք ցանկանում են պայուսակ ունենալ, գնահատականներ ստանալ և այլն:

1.2. Խաղը որպես երեխայի մեջ հայրենաճանաչողություն սերմանելու միջոց

Ինքնուրույն և հաղորդակցման պատրաստ, սոցիալական միջավայրում ազատ կողմնորոշվող և սեփական արժանիքներն գնահատող անձնավորություն ձևավոման խնդիրն դրված է նախադպրոցական հաստատությունների առջև: Նախադպրոցական կրթության հայեցակարգի հիմքում դրված է յուրաքանչյուր երխայի անհատականության բացրահայտումը, որի բաղկացուցիչ մասն են կազմում նրա ազգային մտածելակերպի տարրերը: Նախադպրոցականի դաստիարակության գերխնդիրներից է երեխային դեպի համընդհանուր մարդասիրական արժեքներ ուղղորդելը, որին կարելի է հասնել ազգային առանձնահատկություններին և մշակույթին ծանոթանալու միջոցով: Այդ իսկ պատճառով նախադպրոցական հաստատությունների մանկավարժները շատ լավ պետք է տիրապետեն երեխայի հոգեկանի զարգացման առանձնահատկությունները:

Նախադպրոցական տաիրքում երեխան, մտնելով նոր սոցիալական միջավայր՝ մանկապարտեզ, նոր տեսակի հարաբեությունների փորձ է ձեռք բերում: Նոր փորձի ու գիտելիքների ձեռքբերմանը մեծապես նպաստում է երեխայի *խաղը*: Երեխաները սկսում են խաղալ դերասյուժետային խաղեր, որոնցում ստանձնում են այլ՝ հաճախ մեծահասակների դերեր: Խաղերի միջոցով երեխաները կարծես ծանոթանում են մեծերի աշխարհին, սովորում են այլ մարդկանց տեսանկյունից նայել տարբեր իրավիճակների, փորձարկում են վարքի տարբեր ձևեր և այլն: Որոշ հոգեբաններ կարծում են, որ նախադպրոցկան տարիքը և հատկապես դրա վաղ շրջանը՝ 3 տարեկանը, ճգնաժամային տարիք է: Ըստ նրանց՝ երեխայի եսակենտրոնության հաղթահարումը և սեփական «Ես»-ի առանձնացումը հաճախ հեշտ չի լինում: Դա դրսևորվում է երեխաների համառությամբ, ինքնակամությամբ, ըմբոստությամբ, մեծահասակների արժեզրկմամբ, բողոքով, բունտով: Է. Էրիքսոնը կարծում է, որ այս ճգնաժամի դրական ելքի դեպքում երեխան ձեռք է բերում ինքնավարություն, նախաձեռնողականություն, ինքնավստահություն, իսկ բացասական ելքի դեպքում երեխան կարծես իրեն զգում է «մարտում պարտված»-ի նման, ունենում է մեղքի զգացում և դառնում է ավելի խոնարհ ծնողների նկատմամբ: Այս ամենից պարզ է, որ ծնողները կարող են լուրջ ազդեցություն ունենալ տվյալ շրջանում երեխաների մոտ

առաջացող խնդիների լուծման վրա: Շատ կարևոր է, որ ծնողները հասկանան երեխաների վարքի դրդապատճառները, նրանց պահանջները և տան նրանց որոշակի ազատություն և ինքնավարություն: Նախադպրոցական տարիքը համապատասխանում է երեխաների 3-5 կամ 6 տարեկանին: Շատ երեխաներ այս տարիքում հաճախում են մանկապարտեզ, որը իրենց համար մի նոր մոլորակ է, և որտեղ իրենք մեծ բացահայտումներ են անում: Պատահական չէ, որ երեխաները հենց այս տարիքում են մանկապարտեզ գնում: Բանն այն է, որ 3 տարեկանից երեխաները դառնում են ավելի ինքնուրույն, սովորում են որոշ ժամանակ հեռու լինել մայրիկից, հասակակիցների հետ շփման և նոր փոփոխությունների պահանջ են ունենում:

Տարերային, անկազմակերպ մոտեցումները իրենց հետքն են թողնում երեխայի հոգեկան գործընթացների ոչ լիարժեք դրսևորման վրա: Ինչպես նշում է Լ.Վիգոտսկին, յուրաքանչյուր տարիքային փուլում տարբերակում են զարգացման երկու մակարդակներ՝ արդիական և մոտալուտ: Արդիական ասելով հասկանում ենք հոգեկան գործընթացների այն մակարդակը, որը ձևավորվել է զարգացման որոշակի ամփոփ փուլի ավարտման արդյունքում: Իսկ այն, ինչը երեխան ի վիճակի է իրականացնել մեծի միջամտությամբ, մատնանշում է նրա զարգացման մոտալուտ գոտին [1]:

Նույն ժամանակահատվածում Լ.Վիգոտսկին նաև վերլուծություն է տվել մանկական խաղի այն ազդեցության տեսանկյունից, որ այն ունի նախադպրոցական մանկության մտավոր զարգացման գործընթացների վրա: Նա նախադպրոցական տարիքի մտավոր զարգացման մեջ խաղի դերը համեմատում է վաղ մանկության մտավոր զարգացման մեջ ուսուցման դերի հետ: «Խաղի դերը երեխայի մտավոր զարգացման մեջ» (1933) դասախոսության սղագրության մեջ Վիգոտսկին առաջին անգամ խոսում է խաղի մասին հենց որպես նախադպրոցական տարիքի գործունեության առաջատար տեսակ և բացահայտում է դրա նշանակությունը երեխայի զարգացման համար, դիտարկվող ժամանակաշրջանի հիմնական նորագոյացությունները, Նախադպրոցական կրթության համառուսաստանյան կոնֆերանսի «Ուսուցման և մտավոր զարգացման խնդիրը դպրոցական տարիքում» (1934) իր զեկույցում նա մանրամասնորեն անդրադառնում է նախադպրոցական

տարիքում ուսուցման և զարգացման փոխհարաբերություններին վերաբերող հարցերին, ցույց տալով, թե ինչպես է այս ժամանակահատվածում. այն գիտությունների տրամաբանությամբ, որոնք դպրոցում սկսում են դասավանդվել դպրոցական ուսուցմանը անցնելու նախադրյալները[1]:

Նախադպրոցական տարիքում ուսուցման և զարգացման վերաբերյալ Վիգոտսկու աշխատությունները մինչ օրս չեն կորցրել իրենց նշանակությունը: Հետևելով հոգեկանի սոցիալ-պատմական բնույթի գաղափարին, Վիգոտսկին անցում է կատարում սոցիալական միջավայրի մեկնաբանմանը ոչ թե որպես գործոն, այլ որպես անձի զարգացման աղբյուր: Զարգացման մեջ, նշում է նա, կան, ասես, երկու միահյուսված գիծ. առաջինը գնում է բնական հասունացման ճանապարհով, երկրորդը՝ մշակույթների, վարքագծի և մտածելակերպի յուրացումն է: Վարքագծի և մտածողության կազմակերպման օժանդակ միջոցները, որոնք մարդկությունը ստեղծել է իր պատմական զարգացման ընթացքում, նշաններ-խորհրդանիշների համակարգերն են: Նշանը մարդկության կողմից մշակված գործիք է մարդկանց միջև հաղորդակցության գործընթացներում: Դա մի կողմից մեկ այլ անձի վրա ազդելու միջոց է, մյուս կողմից՝ իր վրա: Նշանի և իմաստի միջև կապի տիրապետումը, գործիքների օգտագործման մեջ խոսքի օգտագործումը նշանավորում է նոր հոգեբանական գործառույթների, ավելի բարձր մտավոր գործընթացների հիմքում ընկած համակարգերի առաջացումը, որոնք հիմնովին տարբերում են մարդու վարքը կենդանիների վարքից:

Կրթություն- սա սոցիալ-պատմական փորձի փոխանցման և հմտությունների, գիտելիքների և հմտությունների յուրացման կազմակերպման գործընթաց է: Զարգացնելով Վիգոտսկու հենց այս գաղափարը և հենվելով խաղի՝ որպես երեխաների մոտ առաջատար գործունեութուն, կարող ենք ասել, որ մեծահասակների կողմից մշակույթի, պատմության փորձի փոխանցուը հենց խաղի միջոցով նպաստում է նախադպրոցակն տարիքի երեխաների մոտ հայրենասիրության ձևավորման գործընթացին:

Նախադպրոցական տարիքը կարևորագույն շրջան է անձի կայացման և բնականոն զարգացման համար, որը մեծապես կախված է երեխայի շրջապատող միջավայրից: Ընտանիքից բացի նախադպրոցականի անձի զարգացման մյուս կարևոր

միջավայրն է նախակրթարանը, որտեղ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի հոգեբանամանկավարժական մթնոլորտ, որում կխթանվեն և կզարգանան նախադպրոցականի դեռևս նոր ձեռք բերած անձնային նորագոյացությունները՝

Հենց նախակրթարանում մանկավարժները երեխաների հոգեկանի զարգացման առանձնահատկություններից ելնելով, հաշվի առնելով երեխաների սենզիտվությունը պետք է խաղային մեթոդներով երեխայի մեջ սերմանեն հայրանասիրության վեհ գաղափարը: Այս տարիքի երեխաները շատ հետաքրքրասեր են և ընկալունակ են նոր տեղեկատվությունը շուտ յուրցնելու, ուստի մամկավարժ- դասիարակաները կարող են և պետք է հիմնվեն երեխայի հենց այս առանձնահատկությունների վրա:

Գլուխ 2.

Հայրենաճանաչողության և հայրենասիրության գործընթացի ձևավորումը նախադպրոցական տարիքի երեխաների մոտ

Մարդկության պատմական զարգացման վաղ ժամանակաշրջաններից սկսած հայրենասիրությունը եղել և մնում է ցանկացած հասարակության բարոյագիտական արժեհամակարգի բաղկացուցիչ մասը: Դեռևս անտիկ աշխարհի փիլիսոփաները հասարակության բոլոր անդամների գլխավոր պարտականությունը համարում էին հայրենասիրությունը:

Հայրենասիրությունը կամ պատրիոտիզմը հիև հունարենից սկիզբ առնող եզր է (patris-հայրենիք): Փիլիսոփայական մտքի աղբյուրները տալիս են տարողունակ սահմանումներ հայրենասիրությանը. «Հայրենասիրությունը ցանկացած սոցիալական կազմակերպության (օրինակ՝ մարդկային հանրության) հզոր ամրաններից է, որի քայքայումով (ինքնաբերաբար, թե արհեստականորեն) սկսվում է կազմակերպության վախճանը: ...Ասվածին ավելացվում է՝ ծառայությունը հայրենիքիև, պաշտպանությունը թշնամիներից»:

Հայրենասիրական և քաղաքացիական դաստիարակության մանկավարժական տեսությունը կառուցվում է ժողովրդականության սկզբունքի Կ. Դ. Ուշինսկի, Լ. Ն. Տոլստոյ, Ռ.Ի.Ժուկովսկու, Ն.Ֆ.Վինոգրադովի, Ս.Ա.Կոզլովայի, Մ.Ի.Բոգոմոլովայի. Ժ.Կ.Սուսլովայի հետազոտությունների վրա: Մասնավորապես Կ.Ուշինսկին, կարևորելով մարդու համակողմանի և ներդաշնակ զարգացումը, միաժամանակ նշում էր, որ բարոյական դաստիարակությունը մարդու ձևավորման հիմնական խնդիրն է, իսկ գիտելիքներով զինելը, մտավոր զարգացումն ընդհանրապես, պետք է նպատակաուղղված լինեն այդ հիմնական խնդրի լուծմանը: Այն ուսուցումը, որը չի դաստիարակում մարդասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, չի նպաստում բարոյական որակների ձևավորմանը, չի հասնում իր նպատակին:

Կ.Ուշինսկու բարոյական դաստիարակության տեսության հիմնական հարցը հայրենասիրությունն է: Կ.Ուշինսկին այն համարում էր մարդու բարոյական վարքագծի գլխավոր կողմը: Ըստ նրա՝ հայրենասիրության զգացումը հատուկ է

բոլոր մարդկանց, նույնիսկ հանցագործներին, իսկ եթե կա մեկը, ում մեջ մեռել է այդ զգացումը, ապա դժվար թե նրա հոգում մնացած լինի որևէ սուրբ բան. հայրենասիրությունը հոգու առաքինություններից վերջինն է մեռնում:

Բարոյական դաստիարակության գործում Կ.Ուշինսկին դեմ էր հարկադրանքի մեթոդների կիրառմանը: Հարկադրանքն ըստ նրա՝ երեխաներին դարձնում է երկերեսանի. առերևույթ նրանք պահպանում են բարոյական վարքի նորմերը, իսկ հարմար առիթի դեպքում խախտում դրանք: Ուսուցիչը պետք է ոչ թե ահ ու սարսափ տարածի, այլ հարգանք ներշնչի իր նկատմամբ [3]:

Իսկ հայտնի մանկավարժ Յ.Ա.Կոմենսկին գտնում էր, որ հայրենասիրական դաստիարակության կարևորագույն խնդիրներից է մարդկանց օգնելու ձգտում սերմանելը: Իր «Մեծ դիդակտիկայում» նա գրում է. «Միայն այն ժամանակ երջանիկ օրեր կգան մեզ համար, եթե բոլորը գործեն հօգուտ համընդհանուր բարօրության» [4]:

Հայրենասիրական դաստիարակության հետազոտություններում առանձնահատուկ նշանակություն ունեն Վ.Սուխոմլինսկու աշխատանքները: Նա, ընդգծելով ոլորտի դժվարությունները, գտնում էր, որ «...հայրենիքի նկատմամբ սերը կամքի ուժի է վերածվում այն ժամանակ, երբ մարդու գիտակցության մեջ ամրապնդվում են հայրենի վայրերի և լեզվի հետ կապված կերպարներ, երբ առաջանում է հպարտության զգացում, որ այս ամենը քո երկիրն է» [5]:

Ա.Ս.Մակարենկոն նշել է, որ հայրենասիրությունը դրսևորվում է ոչ միայն հերոսական գործերով. Իսկական հայրենասերից պահանջվում է ոչ միայն հերոսական պոռթկում, այլեւ երկար, ցավոտ, քրտնաջան, հաճախ նույնիսկ շատ ցավոտ, անհետաքրքիր, կեղտոտ աշխատանք:

Հիշենք նաև հայ ժողովրդի մեծանուն զավակ Գարեգին Նժդեհի խոսքերը. «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում դրա պակասի պատճառով»[6]: 12-րդ դարի մանկավարժական մտքի վառ ներկայացուցիչ է Կիլիկիայի կաթողիկոս Ներսես Շնորհալի Պահլավունին, որն իր գրական-մանկավարժական երկերում, խրատական-ուսուցողական ոտանավորներում բարոյական խրատներ է տալիս՝ առաջնահերթ կարևորելով հայրենասիրություն ու ազգային նվիրվածությունը: Ազգային մտածողության ձեռքբերմանը նպաստել են նաև

Այրիվանքի դպրոցի ղեկավար-ուսուցչապետ Մխիթար Այրիվանցու /13-րդ դար/ ճառերն ու խրատները: 19-րդ դարի 60-ական թվականներից սկսած աշխարհիկ ոգին դպրոցում դառնում է գերիշխող՝ շնորհիվ հետևյալ մեծանուն մանկավարժների՝ Ղ.Աղայանի, Ս.Մանդինյանի, Ա.Բահաթրյանի, Գ.Էդիլյանի, Ա.Շավարշյանի Ա.Մովսիսյանի և ուրիշների, և մի շարք հայ հայտնի արձակագիր-մանկավարժների /Ռաֆֆի, Պ.Պռոշյան, Ռ.Պատկանյան/:

Հայրենիքը հայրենասիրության օբյեկտ է, որին ուղղված է հայրենասիրության սուբյեկտների՝ տվյալ երկրի (պետության) հասարակության (քաղաքական հանրության) գործունեությունը: Խոսելով հայրենասիրության մասին, ռուս պատմաբան Ն.Մ.Կարամզինը առաջ է քաշում երեք բաղադրիչներից բաղկացած մոդել.

1. ֆիզիկական սեր հայրենիքի նկատմամբ («...Այստեղ եմ ծնվել, այստեղ մեծա ցել և այս ջուրը խմել սառնորակ:
2. քաղաքացիական սեր (երբ կապված ես ամուր սոցիալական կապերով՝ ազատությունների, պարտականությունների և իրավունքների համադրությամբ).
3. քաղաքական սեր (երբ պահպանում ես գործունեությանդ մեջ հայրենիքի քաղաքական իդեալը) [9]:

Ընդհանրացնելով վերը նշված երեք բաղադրիչները՝ եզրակացնում ենք. հայրենիքը պետական-հայրենասիրական գործունեության օբյեկտ է, որի կառուցվածքը մեր իրականության համար կարելի է ներկայացնել հետնյալ սուբյեկտիվ տարրերով. ա) հայրենասիրական գիտակցություն (հայրենասիրության դրսեորում հայրենիքի սուբյեկտի կողմից), բ) հայրենասիրական վերաբերմունք (հայրենասիրական գիտակցական ուղղվածություն՝ ներգործության առումով), գ) հայրենասիրական գործունեություն (հայրենասիրական նպատակների իրագործմանն ուղղված գործողությունների կամ արարքների համախումբ, որով դրսևորվում է հայրենասիրական գիտակցությունը):

Հայրենասիրությունը եղել ե մնում է հայ ժողովպի ինքնության բնորոշ գիծ, հատկանիշ, պետականության հիմնադրման ն զարգացման ոգեղեն հիմք: Հայրենասիրության գաղափարները Հայաստանում ծնունդ են առել հայ ժողովրդի ծագման, ձևավորման ակունքներում, ամրացվել քրիստոնեության ընդունման հետ:

Հայ ժողովուրդն իր ողջ պատմության ընթացքում մարտնչել է օտար նվաճողների դեմ, վերականգնել է իր կորցրած պետականությանը հայրենասիյության գաղափարի հենքի վրա: Փաստորեն, պատմական նման իրադրություններում հայրենասիրությունը ձեռք է բերել պետական գաղափարախոսության մակարդակ:

Հայրենասիրությունը դրսևորվում է տվյալ երկրում ապրող ժողովրդի նկատմամբ սիրով: Երբ ասում ենք հայրենիք, առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող մարդկանց: Մեզանից յուրաքանչյուրի համար հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց և մայրենի լեզվից: Աճող սերնդին հայրենասեր դաստիարակել նշանակում է մշտապես աշխատել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարօրության, բարեկեցության բարձրացման գործին նրան հաղորդակից և մասնակից դարձնելու համար, «որդեգրել» հայրենիքում ընդունված օրենքները, դաստիարակել դրանց ենթարկվելու ունակություն, հարգել սահմանված կարգ ու կանոնը, ունենալ գիտակցական կարգապահություն, մասնակցել տնտեսության, մշակույթի, գիտության ու տեխնիկայի զարգացմանը, ժողովրդին պաշտպանել թշնամու ոտնձգություններից, հարկ եղած դեպքում կյանքը չխնայել հայրենի երկրի համար, քաղաքացու մեջ ձևավորել հպարտության զգացում սեփական երկրի, հարգանք՝ նրա անցյալի նկատմամբ: §Ապրել ու մեռնել հայրենիքի համար, ահա խնդիրը, որ իբրև նպատակ՝ ես ընտրել եմ ինձ համար իմ մանկության օրերից¦ [8],- ահա թե ինչպես էր պատկերացնում հայրենասիրությունը հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը:

Հայրենասիրական դաստիարակության փուլերն են՝

1) նախնական (բարոյական պատկերացումների, զգացմունքների, վարքի փորձի ձևավորում),

2) գեղարվեստական-ծանոթացնող (ծանոթություն ազգային ավանդույթների, ազգային արվեստի հետ),

3) կոգնիտիվ-հուզական (սեփական երկրի, փոքր հայրենիքի, այլ երկրների ազգերի հանդեպ հետաքրքրության զարգացում),

4) հուզա-գործնական (գործունեության տարբեր ձևերում սեփական գիտելիքները իրագործելու ցանկության և ունակության ձևավորում):

Հայրենասիրական դաստիարակության միջոցներն են՝ գեղարվեստական գրականությունը, արվեստը, ավանդույթները, ֆոլկլորը, պրակտիկ գործունեությունը:

Մեթոդներն են՝ ***էքսկուրսիաները, խաղ-էքսկուրսիաները, թանգարանների, մանկական նկարների ցուցահանդեսների ստեղծումը:***

Նախադպրոցական կրթության մանկավարժական համակարգը հարստացնում են նաև արտասահմանյան մանկավարժական տեսությունները՝ մանկապարտեզի մակարդակում լրագրության գաղափարը, գեղարվեստա-բովանդակային զարգացնող միջավայրի վերակառուցման գաղափարը (Իտալիա), սեփական արարքների և գործունեության համար անձնական պատասխանատվության դաստիարակման գաղափարը:

Հայրենասիրություն հասկացությունը օրգանական կապի մեջ է տվյալ երկրի պատմության հետ, քանի որ հայրենիքը միայն արդի ժամանակաշրջանի երկիրը չէ, այլ նրա ողջ պատմությունը, նրա մշակույթի, հոգևոր կայացման ընթացքն է, անցյալը, ներկան, ինչպես նաև ապագան:

Այդ առումով թանգարաններն իրենց կարևոր դերակատարումն ունեն սաների հայրենաճանաչության գործընթացում, որոնք իրենց հիմնական և ժամանակավոր ցուցադրություններով ներկայացնում են այն կարևոր պատմական իրողությունները, փաստերը, որոնք պարտավոր է իմանալ իր հայրենիքը սիրող և հարգող յուրաքանչյուր քաղաքացի, քանի որ այսօր մասսայական բնույթ է կրում ապատեղեկատվությունը, իսկ որպեսզի հարկ եղած դեպքում պարզաբանվի և հարկ լինի պաշտպանել հայրենիքը, հայրենասերը պետք է զինված լինի ճշգրիտ գիտելիքներով: Կազմակերպվում են *թանգարան-նախակրթարան կապն* ամրապնդող համատեղ միջոցառումներ՝ *թեմատիկ դասեր, խաղ-էքսկուրսիաներ,* որոնց նպատակն է սաներին ծանոթացնել պատմական հայրենիքից մինչև Հայաստանի Հնարապետության պատմական հարուստ անցյալի և ձեռք բերված վիթխարի նվաճումների հանդեպ: Այս առումով թանգարանի կատարած աշխատանքը շատ է արժևորվում: Կրթական ծրագրերը կազմելիս թանգարաններն պետք է առաջնորդվեն հետևյալ կարգախոսով՝ սովորեցնել ոչ թե պարտադրելով, այլ խաղի միջոցով, քանի որ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ, ինչպես

վերևում արդեն անդրադարձել ենք, որպես առաջատար գործունեություն համարվում է խաղը: 4-6 տարեկան երեխաների հետ տարվող աշխատանքների հիմքը խաղն է, քանի որ այդ տարիքում ընկալելի է դաստիարակության խաղային տարբերակը: Էքսկուրսիայի առավել արդյունավետ տևողությունը չպետք է գերազանցի 20 րոպեն: Ցանկալի է ելնելով երեխաների հոգեկանի զարգացման առանձնահատկություններից թանգարանում կիրառվել նաև տեխնիկական հնարքներ՝ ժամանակակից շունչ հաղորդելով հիմնական ցուցադրությանը:



Ուսումնասիրվող խնդիրը նոր չէ թե հոգեբանության, և թե մանկավարժության մեջ: Մասնավորապես 20-րդ դարի 50-60-ական թվականներին մեր կողմից ուսումնասիրվող խնդիրներին անդրադարձել են Յու. Բաբանսկին, Բ. Լիխաչևը, Վ. Ստոլետովը, Յու. Ամիրջանյանը, Ա. Սահակյանը, Վ. Սուխոմլինսկին, Ս. Խաչատրյանը, Ս. Պետրոսյանը, Գ. Շչուկինան, Ս. Մանուկյանը, Ս. Գևորգյանը, Հ. Անդրեասյանը, Ռ. Համբարձումյանը, Վ. Աթոյանը, Ս. Զաքարյանը, Ա. Սարգսյանը և ուրիշներ:

Հայրենասիրական դաստիարակությունը, հանդիսանալով անձի համակողմանի զարգացման կարևորագույն հատկանիշներից մեկը, հայրենիքի նկատմամբ աստիճանական և անընդհատ իրագործվող սիրո և հարգանքի դրսևորումն է: Այն ընդունակ է անձի մեջ ձևավորել այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են սերը և հարգանքը հարազատ քաղաքի, ժողովրդի, ընտանիքի,

հայրենիքի պատմության արժանի էջերի նկատմամբ և վերջապես ձգտումը՝ տեսնել հայրենիքը ծաղկուն և բարգավաճ:

Եզրակացություն

Նախադպրոցական կրթության ժամանակակից հայեցակարգը պահանջում է յուրաքանչյուր երեխայի անհատականության բարձրացման բացահայտում, որի բաղկացուցիչ մաս են կազմում նրա ազգային մտածելակերպի տարրերը: Ուսումնասիրության արդիականությունը պայմանավոված է ազգային մտածելակերպի ձևավորման ավանդական մոտեցումների մանրամասն վերլուծության անհրաժեշտությամբ, որի արդյունքում կնշմարվեն հիմնախնդրի լուծման ժամանակակակից եղանակները:

Այսպիսով, վերլուծելով վերը շարադրվածը և ամփոփելով մեր աշխատանքը պետք է ընդգծենք, որ նախադպրոցական տարիքի երեխաների հայրենաճանաչողության և հայրենասիրության ամրապնդման գործում մեծ դեր ունի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը, ինչի առնչությամ բ անհրաժեշտ է լուրջ աշխատանքներ իրականացնել: Հայրենասիրության դասերը երեխայի անձի ինքնահաստատման, կայացման, բարոյական արժեքների ձևավորման, պատշաճ վարվեցողության, ռազմական գաղափարադաստիարակչական մտածելակերպի բարձրացման և հետագայում զինված ուժերում ծառայելու և ընդհանուր առմամբ արժանապատիվ քաղաքացու նախապայման են հանդիսանում:

Հայրենասիրական աշխատանքը մանկավարժ դասիարակաների կողմից ներառում է հիմնականում ռազմահայրենասիրական թեմաներով միջոցառումներ, հանդեսների, բաց դասերի և խաղային թերապիայի միջոցով ուսուցանում, ցանկալի է հանդիպումներ մարտական գործողությունների մասնակիցների, մերօրյա հերոսների հետ: Արդյունավետ են նաև նախակրթարաններում սպորտային և մարզական միջոցառումները: Այդ առումով ցանկալի է մարզական, մրցակցային խաղերը վեր ածել հայ ժողովրդի համար պատմական հերսոսական պայքարի մի դրվագի:

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք. այն չի ձևավորվում միանգամից. դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի

անբաժանելի մաս ու բնավորության գիծ:

Նշված թեմայի յուրացման գործում կարևորվում է ծնողների դերակատարումը որպես պատմամշակութային փորձի փոխանցում ավագ սերնդից երեխաներին, ուստի նախակրթարան-երեխա-ծնող կապը, համագործակցությունը պետք է մշտապես գործի:

Այսպիսով, երբ խոսքը վերաբերում է հայրենասիրության ձևավորմանը, այս դեպքում կրթական աշխատանքի էությունը պետք է լինի այնպիսի մանկավարժական պայմանների ստեղծումը, որոնք իսկապես կնպաստեն դպրոցականների մեջ այս ներքին հակասությունների բորբոքմանը և կխրախուսեն նրանց զարգացնել այդ հատկությունները իրենց մեջ:

Այդ իսկ պատճառով առաջարկվում է.

1. Պատմության, ավանդույթների, մշակույթի, իր ժողովրդի, իր տարածաշրջանի, իր հայրենիքի ուսումնասիրությունը:

2. Մասնակցություն տարբեր տեսակի մրցույթների, դպրոցի, քաղաքի, շրջանի:

3. Տարածաշրջանի, տարածաշրջանի, երկրի էկոլոգիայի, բնական և նյութական ռեսուրսների պահպանման հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումներ:

4. Մասնակցություն մանկական, պատանեկան միջոցառումներին:

5. Տարբեր ոլորտներում Հայաստանի ձեռքբերումների և հաջողությունների ցուցադրում:

6. Զբոսաշրջային զարգացում, հանդիպումներ հետաքրքիր անհատականությունների, իրենց հայրենիքի հայրենասերների հետ:

7. Այցելություն տարբեր ցուցահանդեսներ, որոնք արտացոլում են հայ արհեստավորների, նկարիչների, ճարտարապետների և այլնի ձեռքբերումները:

Արդեն ընդգծել ենք թանգարանների կարևոր դերակատարումը հայրենաճանաչողության գործընթացում: Եթե ցանկանում ենք ապագայում օրինակելի, հայրանսեր սերումդ ունենալ անհրաժեշ է թանգարան-նախակրթարան կապը շարունակական բնույթ կրի և դառնա նախակրթարանների մեթոդական ծրագրի կարևորագուն մաս:

Օգտագործված գրականության ցանկ

1.Վիգոտսկի Լ.Ս., - Մանկան հոգեբանություն, Մ 1984, h

2.Виготски Л.С. Հավաքածուներ. Վեց հատորով «Հոգեկանի զարգացման հիմնախնդիրները»

3.Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր. [թարգմ. ռուս.] կազմ. Ա. Գ. Ցամաքյան, Լ. Գ. Սեղբոսյան.-Եր.: Լույս, 1981, 443 էջ (էջ 13)

4.Կոմենսկի Յան Ամոս, Մեծ դիդակտիկա, Եր., , 2010թ., -115էջ:

5.Սուխումլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կոլեկտիվ դաստիարակության մեթոդիկա, Եր., Լույս, 1986թ., -551էջ:

6.Գարեգին Նժդեհի հայրենասիրական ասույթներից:

7. Ա.Վ.Պետրովսկի-Տարիքային և մանկավարժական հոգեբանություն Երևան-1977

8.http://forum.armedu.am/showthread.php/854- Հայ դասականների մտքի գանձարանից:

9.В.Новочихин. Система государственно-патриотического воспитания. Вестник границы России, № 2, март-апрель 2007г., стр. 61-65.